ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ
Արա Զոհրաբյանի պաշտոնավարման 100 օրվա

ք. Երևան
21 հունվարի 2014թ.

Նախաբան

2013 թվականի սեպտեմբերի 14-ին տեղի ունեցած փաստաբանների պալատի նախագահի ընտրությանը փաստաբանների պալատի գործող արտոնագիր ունացող 1370 փաստաբաններից մասնակցեցին 913 փաստաբան:

Սեպտեմբերի 14-ի ընտրությունը մինչ օրս փաստաբանների պալատում տեղի ունեցած ընտրություններից աչքի ընկավ թեկնածուների մրցակցությամբ, Պալատի գործունեության և ընտրության նկատմամբ հանրության հերքրքրությամբ, ինչպես նաև ընտրող փաստաբանների աննախադեպ բարձր ակտիվությամբ:

Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 2013 թ. սեպտեմբերի 14-ի թիվ Ն-1-Ա որոշմամբ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից չորս տարի ժամկետով որպես փաստաբանների նախագահ ընտրված համարվեց փաստաբան Արա Գագիկի Զոհրաբյանը՝ քվեաթերթիկներ ստացած ընդհանուրը 913 (ինը հարյուր տասներեք) փաստաբանների՝ 713 (յոթ հարյուր տասներեք) «կողմ» ձայներով:

Որոշմամբ սահմանվեց նաև, որ փաստաբանների պալատի նորընտիր նախագահի լիազորությունները սկսվում են 2013 թվականի հոկտեմբերի 4-ից:

2014 թվականի հունվարի 14-ին լրացավ Արա Զոհրաբյանի պաշտոնավարման 100 օրը:

Այսօր՝ 2014 թ. հունվարի 21-ին Արա Զոհրաբյանը հանրության առջև կամփոփի պաշտոնավարման 100 օրերի կատարած աշխատանքը ու կխոսի ապագայի անելիքների մասին:

Մամուլի խոսնակ՝ Հայկ Հակոբյան

Հաշվետվության կառուցվածքը

1. Պալատի կառավարման և գործունեության թափանցիկություն և ինստիտուցիոնալ հզորացում.
2. Արտաքին հարաբերություններ.
3. Հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացում.
4. Մասնագիտական կրթություն և փաստաբանների վերապատրաստում.
5. Ապագա ծրագրեր:

1. Պալատի կառավարման և գործունեության թափանցիկությունը և ինստիտուցիոնալ հզորացումը

- Պալատի խորհրդի և նախագահի որոշումները հրապարակվում են Պալատի կայքում:
- Նորաստեղծ կայքում հնարավորություն է նախատեսվել առցանց հետևել Պալատի խորհրդի նիստերին: Այս համակարգը կգործի Պալատի նոր շենք տեղափոխվելուց հետո:
- Պալատի կայքում (www.advocates.am) հրապարակվել է 2013 թվականի հոկտեմբերի 4-ից դեկտեմբեր ժամանակահատվածի համար կազմված ՀՀ փաստաբանների պալատի ֆինանսական հաշվետվությունը, որտեղ արտացոլված են Պալատի ֆինանսական միջոցների մուտքերն ու ելքերը:
- 2013թ. դեկտեմբերին հաստատվել և Պալատի կայքում հրապարակվել է Պալատի 2014թ. տարեկան բյուջեն:

Կադրային քաղաքականություն

- Պալատի աշխատակազմը համալրվել է նոր որակյալ կադրերով, մասնավորապես նշանակվել են փաստաբանների պալատի նախագահի 3 տեղակալներ, ֆինանսական տնօրեն, մամուլի խոսնակ, նախագահի խորհրդականներ, որոնց հիմնական խնդիրն է աջակցել Պալատի նախագահին իր նախընտրական ծրագրի իրականացմանը: Պալատում ստեղծվել է մի թիմ, որն ի զորու է լուծելու Պալատի առջև ծառացած խնդիրները:

Հասարակության հետ կապերի ընդլայնում

- Պալատում յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը համարվում է ընդունելության օր:
- Պալատում համապատասխան հարթակ է ստեղծվել, որի միջոցով փաստաբաններն իրենց գործերն են լուսաբանում: Երեք ամսվա ընթացքում տասը մամուլի ասուլիս է կազմակերպվել:
- Պալատում ինտենսիվ կազմակերպվում և լուսաբանվում է ակումբի գործունեությունը, որը փաստաբանների քննարկումների միջոցով նպաստում է փաստաբանների տեսակետների առաջխաղացմանը: Երեք ամսվա ընթացքում տեղի է ունեցել շուրջ տասը ակումբի նիստ, որտեղ քննարկվել են մասնավորապես հետևյալ հարցերը՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգը, ինքնաբացարկի ինստիտուտի կարգավորումները, փաստաբանական գործունեության առանձնահատկությունները և այլն:
- Պալատը հասարակությանն իրազեկում է փաստաբաններին առնչվող ինչպես դրական զարգացումները, այնպես էլ՝ բացասական:

Պալատի և փաստաբանների փոխհարաբերություններ

- Պալատի և փաստաբանների միջև կապն ամրապնդելու նպատակով առաջին հերթին ձեռնարկվում են փաստաբանների գործունեությունը լուսաբանելու և փաստաբաններին խրախուսելու հետ կապված միջոցառումներ:
- Երեք փաստաբաններ պաշտոնապես պարգևատրվել են շնորհակալագրերով՝ անվճար խորհրդատվություն տրամադրելու համար: Այս քայլով խրախուսվում է անվճար իրավաբանական օգնության տրամադրումը սոցիալապես անապահով հայրենակիցներին:
- Պալատի հոբելյար փաստաբաններին հանձնվում են անվանական շնորհավորագրեր: Այս քայլով Պալատը հիշեցնում է փաստաբաններին, որ Պալատը ստեղծված է փաստաբաններին ծառայելու համար:
- 19.12.2013 թվականին պատվոգրով և Պալատի անվանական ժամացույցով պարգևատրվել է ՀՀ ամենատարեց փաստաբան Նարիման Միրզաբեկյանը՝ ծննդյան 90 ամյակի, ինչպես նաև երկարամյա և բարեխիղճ աշխատանքի համար:
- Սոցիալական ցանցի «Փաստաբաններ» խմբի միջոցով Պալատը որոշ հարցեր ներկայացնում է փաստաբանների քննարկմանը, նախքան որոշում կայացնելը:
- Ստեղծվել է երիտասարդական խորհուրդ, որը ձևավորվել է Փաստաբանական դպրոցի առաջին շրջանավարտների կազմից: Երիտասարդական խորհուրդը կազմված է 6 փաստաբանից, իսկ երիտասարդական խորհրդի նախագահ է նշանակվել Պալատի խորհրդի երիտասարդ անդամը: Երիտասարդական խորհրդի նպատակն է աջակցել վերջին երեք տարում փաստաբանական գործունեության արտոնագիր ստացած և հետագայում նոր արտոնագրեր ստացող փաստաբանների մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին, վեր հանել վերջիններիս գործունեության ընթացքում առաջացած խնդիրները և աջակցել դրանց լուծմանը, նպաստել նրանց և փորձառու փաստաբանների միջև համագործակցությանը:

- Ստեղծվել է վարչարարության ոլորտի իրավական խնդիրներն ուսումնասիրող 5 անդամից կազմված աշխատանքային խումբ, որի նպատակն է՝ վարչական իրավունքի ոլորտում վարչարարության հետ կապված խնդիրների ուսումնասիրությունը, վարչական օրենսդրության բացերի վերհանումը, վարչական իրավախախտումների քննությանն առնչվող փաստաբանների բողոքների ուսումնասիրությունը և համակարգումը, օրենսդրական փոփոխությունների փաթեթների կազմումը և ներկայացումը ՀՀ փաստաբանների պալատին:

➢ **Պալատի մարզային քաղաքականություն**

- Հայաստանի Հանրապետության մարզերում և մարզերի քաղաքներում գործող Պալատի անդամ փաստաբաններին համախմբելու, ինչպես նաև նրանց մոտ փաստաբանական գործունեություն իրականացնելու ընթացքում առաջացող խնդիրները վեր հանելու և լուծելու նպատակով հաստատվել է *«Մարզերում համակարգում իրականացնելու մասին»* կարգը, համաձայն որի՝ մարզերում իրականացվում է Պալատի մարզային քաղաքականությունը մարզային համակարգողների և մարզերի քաղաքներում պատասխանատուների միջոցով:
- Մարզային համակարգման շրջանակներում մարզային համակարգողներ են նշանակվել Արագածոտնի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում:
- Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում, Արագածոտնի մարզի Թալին քաղաքում, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում և Լոռու մարզի Ալավերդի և Ստեփանավան քաղաքներում նշանակվել են պատասխանատուներ:
- Մյուս մարզերում և քաղաքներում համակարգողները և պատասխանատուները՝ ելնելով փաստաբանների քանակից, պետք է ընտրվեն:

2. Արտաքին հարաբերություններ

Պալատի պատվիրակությունը 2013թ. նոյեմբերի 7-ից 8-ը պաշտոնական այցով գտնվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում

Այցը նպատակ էր հետապնդում սկիզբ դնել հայկական երկու հանրապետությունների փաստաբանների միջև համագործակցությանը: Այցի ընթացքում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել՝

- ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի,
- ԼՂՀ վարչապետ՝ Արայիկ Հարությունյանի,
- ԼՂՀ արդարադատության նախարար՝ Արարատ Դանիելյանի,
- ԼՂՀ գերագույն դատարանի նախագահ՝ Նարինե Նարիմանյանի և
- ԼՂՀ փաստաբանների պալատի նախագահ՝ Ալեքսանդր Գալստյանի հետ:

Արցախի Նախագահի հետ հանդիպման ընթացքում պատվիրակությունը հայտնել է, որ Պալատը մտադիր է ԼՂՀ փաստաբանների պալատի հետ համագործակցել՝ փաստաբանների վերապատրաստման և ունկնդիրների համար փաստաբանական դասընթացները կազմակերպելու հարցերում:

Այդ նպատակով նախատեսվում է ներդնել հեռավար ուսուցման համակարգ, ինչը հնարավորություն կտա ԼՂՀ փաստաբանին իր բնակավայրից համակարգչով մասնակցել դասընթացին, իսկ ԼՂՀ իրավաբանին սովորել՝ ՀՀ փաստաբանական դպրոցում:

Քննարկվել է նաև ԼՂՀ զորամասերում իրավագիտակցության բարձրացման նպատակով Հայաստանից փաստաբաններ Արցախ գործուղելու հարցը՝ զորամասերում դասախոսություններ և խորհրդատվություն անցկացնելու նպատակով:

Վարչապետ Հարությունյանը նշել է, որ Փաստաբանների պալատի այցելությունը Լեռնային Ղարաբաղ ազդեցություն է ունենալու տեղի փաստաբանների հետագա գործունեության վրա: Քննարկվել են նաև ԼՂՀ փաստաբանների հեռավար ուսուցմանն ուղղված պլանային աշխատանքների կազմակերպումը:

ԼՂՀ փաստաբանների հետ հանդիպում

ԼՂՀ փաստաբանների հետ հանդիպման ժամանակ քննարկվեց փաստաբանության առջև ծառացած ընդհանուր խնդիրները:

Որպես հիմնական առաքելություն Պալատի պատվիրակությունը հայտարարեց, որ պայքարելու է «միջնորդ» փաստաբանների դեմ և նույն պայքարը պետք է տարվի ԼՂՀ-ում:

Պալատը ԼՂՀ փաստաբանների պալատին կօժանդակի տեխնիկայով և կայքով:

Պալատի պատվիրակությունը, 2013թ. նոյեմբերի 19-ից 24-ը պաշտոնական այցով գտնվել է Ֆրանսիայի Հանրապետությունում

Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ հետևյալ կառույցների ներկայացուցիչների հետ՝

✓ԿԱՌՊԱ-ների ազգային միություն (UNCA).

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում ԿԱՌՊԱ համակարգի զարգացման հեռանկարները, ինչպես նաև այդ գործընթացում առկա խնդիրները, այդ թվում օրենսդրական բարեփոխումները:

ԿԱՌՊԱ-ների ազգային միության ներկայացուցիչները պատրաստակամություն հայտնեցին շարունակել աջակցել Հայաստանում համակարգի կայացմանը և ներկայացրեցին այլ երկրների հաջող փորձը ԿԱՌՊԱ ոլորտում, որը կարող է օգտակար լինել ՀՀ-ում համակարգի զարգացման համար:

Կողմերը նաև կարևորեցին վերջերս ԿԱՌՊԱ-ների միջազգային միության ստեղծումը, որի համահիմնադիր է հանդիսանում նաև Պալատը:

✓ ***Փարիզի փաստաբանների պալատ***

Հանդիպման ընթացքում կողմերը ստորագրեցին ***համագործակցության մասին պայմանագիր***, որով վերահաստատվեցին երկու պալատների միջև տարիներ ի վեր ձևավորված բարեկամական հարաբերությունները, ինչպես նաև համաձայնություն ձեռք բերվեց շարունակել համագործակցել փաստաբանների վերապատրաստման, փորձի փոխանակման, գիտաժողովների և սեմինարների անցկացման և մի շարք այլ հարցերում:

Պայմանագրի ստորագրման գործընթացին ներկա էր նաև Փարիզի փաստաբանների պալատի նորընտիր նախագահ Պիեռ-Օլիվիե Սյուղը, ով ընդունել է պաշտոնական այցով Հայաստան այցելելու հրավերը:

✓Պալատի պատվիրակությունը պատիվ ունեցավ ներկա գտնվելու ***Հայ փաստաբանների և իրավաբանների ֆրանսիական միության (AFAJA)*** տարեկան ճաշին, որի ներկայացուցիչների հետ համաձայնություն է ձեռք բերվել զարգացնել համագործակցությունը «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամում գիտաուսումնական այցերի կազմակերպման միջոցով:

✓Փարիզի ԿԱՌՊԱ համակարգի գլխավոր քարտուղարի և տնօրենի հետ հանդիպում:

Պատվիրակությանը ներկայացվեց Փարիզի ԿԱՌՊԱ համակարգի ձևավորման ուղին և ընդգծվեց համակարգի կարևությունը փաստաբանի մասնագիտության ինքնակառավարման և ինքնաֆինանսավորման հարցում, ինչն իր հերթին հանդիսանում է Պալատի անկախության գրավականը:

Փարիզի ԿԱՌՊԱ համակարգի ներկայացուցիչները հայտնեցին իրենց պատրաստակամությունը աջակցել Պալատին ԿԱՌՊԱ համակարգի կատարելագործման համար:

✓Պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել նաև մի շարք հեղինակավոր փաստաբանական գրասենյակների հայազգի ղեկավարների և ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում՝ ֆրանսիահայ փաստաբանների դերակատարումը Հայաստանում ներդրումները խթանելու հարցում, Ֆրանսիայում ապաստան հայցող հայերի իրավական կարգավիճակի խնդիրները, հայոց ցեղասպանության ճանաչման և ժխտողականության քաղաքականության դեմ պայքարին վերաբերող հարցեր, ինչպես նաև փաստաբանության զարգացմանն ուղղված Պալատի կողմից գործադրված քայլերն ու ջանքերը:

✓ ***Փարիզի երիտասարդ փաստաբանների միությունների ազգային ֆեդերացիայի նախագահի հետ հանդիպման*** ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցություն սկսել երկու երկրների երիտասարդ փաստաբանների միջև, հաշվի առնելով նաև այն, որ վերջերս ստեղծվել է երիտասարդական խորհուրդ:

Պալատն անդամակցել է Փաստաբանների միջազգային միությանը (UIA)

2013թ. դեկտեմբերի 7-ին Փարիզում տեղի ունեցած փաստաբանների միջազգային միության տնօրենների կոմիտեի նիստին հաստատվել է Պալատի հայտը միությանն անդամակցելու վերաբերյալ: Կառույցին անդամակցությունը Պալատի հնարավորություն է ընձեռում 120 երկրներ ներկայացնող ավելի քան 200 փաստաբանական միությունների հետ համագործակցություն հաստատել, ինչպես կառույցների, այնպես էլ անհատ փաստաբանների մակարդակով ստանալ աջակցություն իրավաբանների և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված նախաձեռնություններին, ստանալ օրենքների և իրավական մասնագիտությունների վերաբերյալ այլ կարգավորումների վերջին փոփոխություններն ու զարգացումները, անդամներին համար անհրաժեշտ իրավունքի բնագավառների թեմաների վերաբերյալ գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպում և դրանց մասնակցության հնարավորություն:

Միությունը հիմնադրվել է 1927 թվականին և մշտապես հանդես է գալիս մարդու իրավունքների և փաստաբանական միությունների պաշտպանության ոլորտում, մասնավորապես միությունը CCBE կառույցի հետ համատեղ մասնակցել են անդամ պետություններում փաստաբանի մասնագիտության անկախությանը վտանգող գործընթացների դեմ պայքարող նախաձեռնություններին:

Հանդիպում Երևանում

2013թ. հոկտեմբեր ամսին Պալատը հյուրընկալել է Մարսելի փաստաբանների միության անդամ, փաստաբան Դենիս Ֆեռեի, ով Հայաստան էր ժամանել Մարսելի քաղաքապետի պատվիրակության կազմում: Հանդիպման ընթացքում պարոն Ֆեռեն պատրաստակամություն հայտնեց քայլեր ձեռնարկել Պալատի և Մարսելի փաստաբանների միության միջև կապերի ստեղծման և զարգացման ուղղությամբ:

Հանդիպմանը հաջորդել է Մարսելի փաստաբանների միության նախագահի կողմից պատվիրակված փաստաբան, ազգությամբ հայ Էռվե Ղևոնդյանի այցը, որի ընթացքում պարոն Ղևոնդյանը ներկայացրեց Մարսելի փաստաբանների միության նախագահի առաջարկը առաջիկայում կազմակերպել փոխադարձ այցեր՝ համագործակցության հուշագիր ստորագրելու և միությունների բարեկամական կապն ամրապնդելու նպատակով:

Քննարկվեցին նաև Մարսելի փաստաբանների հետ փորձի փոխանակման ծրագրերի իրականացման հեռանկարները:

3. Հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացում



- Ստեղծվել է աշխատանքային խումբ, որը կարճ ժամկետում իրականացրել է հանրային պաշտպանի գրասենյակում առկա խնդիրների վերլուծություն և ներկայացրել է առաջարկություններ:
- Հանրային պաշտպանի գրասենյակը 2013 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին համալրվել է նոր գույքով և տեխնիկայով:

- Հաստատվել է հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ, որով նախատեսվում է առաջին մրցույթն անցկացնել 2014թ. փետրվարին և գործող մոտ 50 հանրային պաշտպաններից առնվազն 20-ին համալրել մրցույթով անցնող փաստաբաններով:
- Մշակվում է հանրային պաշտպանի գրասենյակում աշխատանքի կազմակերպման նոր կանոնակարգ, որը կարգավորելու է նաև քաղաքացիների և ՀՊԳ միջև փոխհարաբերությունները:
- Նախատեսվում է հանրային պաշտպանի աշխատանքի հսկողության և վերահսկողության նոր մոդելների ներդրում, ինչպիսիք են համակարգչային հատուկ ծրագրով հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը ստուգելը և աշխատանքը պլանավորելը, ինչպես նաև դատական նիստերի մոնիտորինգը, վստահորդներից հանրային պաշտպանների գործունեության վերաբերյալ հարցումներ իրականացնելը և այլն:

- Պալատի նոր շենքում հանրային պաշտպանի գրասենյակի համար նախատեսվում են բարեկեցիկ պայմաններ՝ մասնավորապես հարմարավետ աշխատասենյակներ՝ հագեցված տեխնիկական բոլոր միջոցներով, ինչպես նաև առանձնասենյակներ՝ վստահորդների հետ կոնֆիդենցիալ խորհրդակցությունների համար:
- Առաջիկայում ծրագրվում է նաև Երևանից փորձառու հանրային պաշտպանների գործուղում ՀՀ մարզեր՝ մարզում հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացման համար:

4. Մասնագիտական կրթություն և փաստաբանների վերապատրաստում

«Հայաստանի Հանրապետության Փաստաբանական դպրոց» հիմնադրամ

2013թ. հոկտեմբերի 6-ին «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի առաջին շրջանավարտները (թվով 60 հոգի) հանդիսավոր կերպով ստացան փաստաբանական գործունեության արտոնագրեր:

ՀՀ փաստաբանական դպրոցը գործում է 2012թ. հուլիսից, և այդ օրվանից սկսած ընդունվել են ընդհանուր 192 հավակնորդ: 2012թ.-ից առ այսօր ՀՀ փաստաբանական դպրոցն ավարտել են 70 ունկնդիր, որոնք մասնակցելով փաստաբանների պալատի կողմից անցկացվող որակավորման քննություններին՝ ստացել են փաստաբանական գործունեության արտոնագրեր:

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհրդի 05.11.2013թ. թիվ 18-Լ որոշմամբ ստեղծվել է Ուսումնական գործընթացի որակի գնահատման հանձնաժողով, որի հիմնական նպատակն է փաստաբանական դպրոցում կազմակերպվող ուսուցման որակի նկատմամբ մշտական հսկողության իրականացումը:

5. Ապագա ծրագրեր

Առաջիկայում նախատեսվում է կատարել հետևյալ գործողությունները՝

- Ստեղծել փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով, որի հիմնական խնդիրը կլինի փաստաբանների իրավունքների իրականացմանը խոչնդոտող դեպքերի մասին տեղեկատվությունների հավաքումը և դրանք արդյունավետ լուծումը:
- ՀՀ փաստաբանական դպրոցում հեռավար ուսուցման մոդելի ներդրում, որը ՀՀ մարզերի և ԼՂՀ բնակիչներին հնարավորություն կտա իրենց գտնվելու վայրում մասնակցել ուսումնառությանը, իսկ փաստաբաններին հնարավորություն կտա անցնել պարտադիր վերապատրաստման դասընթասները:
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում բարեփոխումներ իրականացնելու նպատակով օրինագծի մշակում և ներկայացում: